

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՁԵՌՆԱՇՂԹԱՆԵՐ
ՄՈՒՆՐՈՏԻ ՀԱՄԱՐ



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2013

Կարինե Աղաբեկյանը ճանաչված արձակագիր է: Նրա գրչին են պատկանում «Սիրո հասունացումը», «Սիրո վերադարձը», «Կնոջ մենամարտը», «Սիրո կանչը», «Զգացմունքների ներդաշնակություն», «Սեր և արժանապատվություն», «Կզան բազում արշալույսներ», «Սիրո ուսուցիչը», «Սիրո ծուղակ», «Շանթի սանձահարումը», «Սիրո հրդեհ» և «Սիրուց չես փախչի» վիպակները, որոնք նշանավորեցին հայ սիրավեպի սկզբնավորումը և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների շրջանում:

Աղաբեկյան, Կ

Ձեռնաշղթաներ Սոխրոտի համար: - եր.: Գիտանք, - 124էջ.

Չեռակա ծանոթության ժամանակ նրանք իրար բուրովին դուր չեկան: *Փնթի ու անշուք կին*, մտածեց Արթուրը Շուշանի մասին՝ նրան տեսնելով լուսանկարին: *Շփացած ու կնասեր մեծահարուստ*, եզրակացրեց Շուշանը՝ տեղեկությ հավաքելով այն ընկերության նոր տիրոջ մասին, որտեղ ինքն աշխատում էր: Սակայն նրանց հանդիպումը անկանխատեսելի հետևանք ունեցավ...

ISBN 978-9939-810-21-8

© Կարինե Աղաբեկյան, 2013

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձությունները հորինված են, ամեն համընկնումը՝ պատահականություն:

Առաջաբան

Մարդիկ լինում են երկու տեսակի՝ արտույտներ և բվեր: Արտույտները շուտ են պառկում քնելու և զարթնում են լուսադեմին: Իսկ բվերը ուշ են քնում և ուշ էլ արթնանում են: Եթե իհարկե ունեն այդ հնարավորությունը:

Շուշան Երանյանը իրեն դասում էր բվերի շարքին, բայց ստիպված էր արթնանալ արտույտների հետ. ինչ արած, շատ կանանց պես պարտավոր էր ժամը իննին լինել աշխատավայրում: Իրականության հետ նրան հաշտեցնող միակ բանը այն էր, որ Շուշանը սիրում էր իր գործը, ավելին, դա իր գոյության իմաստն էր: Եվ իհարկե եկամտի աղբյուրը:

Այս առավոտ զարթուցիչը սովորականի պես զնգաց ժամը յոթին: *Չիմա վեր կկենամ*, իրեն խոստացավ Շուշանը: *Մի քիչ էլ կպատկեն ու վեր կկենամ*: Ու չնկատեց, թե ինչպես ընկավ քնի գիրկը. ինչպես միշտ, քնել էր գիշերվա մեկին մոտ:

Աչքերը բացելով՝ նայեց ժամացույցին և սարսափահար վերթռավ մահճակալից:

Վա՛յ, ո՛րքն անց է: Քնո՛վ անցա:

Սլացավ լողասենյակ, հետո նետվեց հագնվելու: Ստիպված վրան քաշեց նախորդ օրվա հագուստը: Շորը, որ քնելուց առաջ գցել էր աթոռին թիկնակին, մտադրվել էր արդուկել առավոտյան. չսիրած գործը հաջորդ օրվան թողնելու սովորություն ուներ, բայց քանի որ ահավոր ուշանում էր, դրա մասին մտածելը ուշ էր: Իսկ բաճկոնակին, որը կրում էր երեկ, մեկ կոճակ էր պակասում, թեքին ինչ-որ լաքա կար, և տաքատը կարծես ծամված լիներ...

Իրեն անիծելով ծուլության համար՝ Շուշանը գցեց լաքահանիչով սրվակը ձեռնապայուսակը, անցկացրեց խոզանակը անհնազանդ գանգուր մազերով և դուրս վազեց բնակարանից՝ ասես հետևից դևերի մի ոհմակ էր ընկել:

Աշխատավայր հասավ տասնհինգ րոպե ուշացումով: Չհասցրեց նույնիսկ շունչ քաշել և իրեն կարգի բերել, երբ իրեն հաղորդեցին

Աշոտ Զարոյանի կարգադրությունը՝ անհապաղ բարձրանալ ժողովասրահ: Շուշանը շտապ դուրս գնաց սենյակից՝ մտածելով, որ միշտ էլ կհասցնի իրեն կարգի բերել:

Եթե միայն իմանար, թե իրեն ինչ է սպասում, ապա այդքան չէր շտապի:

1

Մի ամբողջ պատվիրակություն էր ժամանել *Արմ մայնինգ* ընկերություն, որպեսզի գործի ընթացքին ծանոթացնի Արթուր Օգանեզովին՝ մոսկվացի հայ գործարարին, որ վերջերս գնել էր այդ ընկերությունը:

Վերջին երկու շաբաթվա ընթացքում, քանի դեռ ընթանում էր առքուվաճառքի բանակցությունը, ընկերությունում նյարդային մթնոլորտ էր տիրում: *Արմ մայնինգի* կառավարչությունը տազնապահար վիճակում էր: Բոլոր մակարդակների կառավարիչները հասկանում էին, որ իրենց աշխատանքը հայտնի ընկերությունում մազից է կախված: Օգանեզովին բնորոշ դեկավարման կոշտ ոճը, որի մասին բոլորը լսել էին, գրեթե առասպել էր դարձել գործարարության աշխարհում:

- Նայե՛ք, պարոն Օգանեզով, սա ձեզ կօգնի որոշ պատկերացում կազմել *Արմ մայնինգի* կառավարիչների մասին, նախքան անձամբ կժանոթանաք նրանց հետ, - ասաց կառավարիչներից մեկը հաճկատար քնծիժաղով և նոր տիրոջը մեկնեց գովազդային գրքույկը, որի առաջին էջին կարևոր պաշտոններ զբաղեցնող աշխատողների խմբային լուսանկարն էր:

Արթուր Օգանեզովը ուղղեց իր կապույտ աչքերի հայացքը լուսանկարին: Առաջինը, ում ուշադրություն դարձրեց, կին էր, բայց ոչ միայն այն պատճառով, որ նա միակն էր տղամարդկանց շրջանում: Նրան նկատելու գլխավոր պատճառը այն էր, որ նա փչացնում էր լուսանկարին պատկերված խմբի ընդհանուր տեսքը: Կինը բարձրահասակ էր և ըստ երևույթին իր բարձր հասակի պատ-

ճառով որոշակի բարդություներ ունեն, որովհետև մեջքը նկատելիորեն կռացած էր: Տպավորություն էր ստեղծվում, թե նա ջանում է մնալ ստվերում, աննկատ լինել: Արթուրին նա հիշեցրեց երկար անշնորհք վերջույթներով ընծուղտի ձագին: Հաստ մուգ շրջանակով ակնոցը փոքրացնում էր նրա առանց այդ էլ նեղ լուրջ դեմքը: Բայց Արթուրին հատկապես ապշեցրեց կնոջ անփույթ տեսքը: Շագանակագույն գանգուր մազերը ցցված էին ամեն կողմ, ասես երբեք սանր չէին տեսել: Արթուրը նաև նշեց կոճակի բացակայությունը բաճկոնակին, որը կախված էր կնոջ իրանին, ինչպես կախիչին: Նա կնճռուովեց: Ինքը զուսպ պերճագեղության տիպար էր և տանել չէր կարող փնթի տեսք ունեցող մարդկանց:

- Ո՞վ է այս կինը, - հարցրեց կտրուկ ձայնով:

- Կի՞նը, - կրկնեց հարցը կառավարիչներից մեկը:

Արթուրը ստիպված էր մատը դնել լուսանկարի պատկերին:

- Ա՛... Շուշանն է՝ ֆինանսական բաժնի կառավարչի պաշտոնակատարը: Միանգամից չհասկացա՝ ում մասին եք հարցնում. մի տեսակ սովոր չենք նրա մասին մտածել՝ որպես կնոջ: Շուշանի ուղեղը ասես հաշվիչ մեքենա լինի: Նա շատ պատվախնդիր է, նրա համար աշխատանքից բացի ոչինչ գոյություն չունի: - Արթուրի զրուցակիցը կարծես արդարանում էր, որ կին է խցկվել ընկերության կառավարչություն: - Նրա կյանքի իմաստը աշխատանքն է, երեք տարվա մեջ ոչ մի անգամ արձակուրդ չի վերցրել...

- Դա վնասակար է գործին, - նկատեց Արթուրը: - Հանգստի բացակայության և գերհոգնածության պատճառով մարդիկ չեն կարող լիարժեք աշխատել և սխալներ են թույլ տալիս: Այս կինը հանգստի կարիք ունի, և, բացի այդ, անձնակազմի կառավարիչը պետք է նրա ուշադրությունը հրավիրի իր թափփված տեսքին: Թող իրեն կարգի բերի:

Ընկերության կառավարիչների դեմքերը ձգվեցին: Առանց պայմանավորվելու՝ նրանք շտկեցին բաճկոնները և փորերը ներս քաշեցին՝ վախենալով ընկնել նոր տիրոջ աչքից: Հանկարծ չլինի թե անբասիր պարոն Օգանեզովը որևէ թերություն գտնի հագուկա-

պում և փնթիի պիտակ կպցնի: Անհարմար լռություն հաստատվեց:

Արմ մայնհինգի կառավարիչները մտածնունքի մեջ էին՝ փնթի^o է արդյոք Շուշան Երանյանը: Ոչ ոք նրան երբևէ այնքան ուշադիր չէր գննել, որպեսզի ուշադրություն դարձներ արտաքին տեսքին կամ հագուստին: Բոլորը գիտեին, որ նա արտակարգ ընդունակ է և ուրիշներից լավ է գլուխ հանում ընկերության դրամամիջոցներից: Գլխավորը դա էր, իսկ մնացածը ոչ ոքի չէր հետաքրքրում:

Արթուր Օգանեզովը շարունակում էր սևեռուն գննել լուսանկարը: Տղամարդկանց քննադատաբար ուսումնասիրելուց հետո ևս մեկ առիթ գտավ դիտողության համար:

- Ոմանք կարծում են, թե աշխատավայրում լավ հազնվելը պարտադիր չէ: Անձամբ ես այլ կարծիքի եմ, ուստի և ոչ մի ջիւս չեմ հանդուրժի այստեղ: Կոկիկ արտաքին տեսքը ենթադրում է կարգապահություն և դրական տպավորություն է ստեղծում: Օրինակ՝ այս տղամարդը վաղուց կարող էր մազերը խուզել և սովորել փողկապ կապել, - փնթփնթաց Արթուրը և մատնացույց արեց մեղավորին: - Արտաքին տեսքի խնամքը պետք է մշտական լինի:

Լսելով ջղային մենախոսությունը՝ *Արմ մայնհինգի* կառավարիչները համերաշխ կերպով որոշեցին սննդակարգ պահպանել, համեմայն դեպս այցելել վարսավիրանոց, ինչպես նաև ձեռք բերել նոր բաճկոն-տաբատներ, վերնաշապիկներ և փողկապներ: Ի վերջո, Արթուր Օգանեզովը ոչ միայն խրատում է, այլև ինքն է անշեղորեն հետևում դավանած սկզբունքներին: Առանց մի գրամ ավելորդ քաշի, բժախնդիր և նրբաճաշակ հագուստով այդ հմայագերիչ տղամարդը այնքան վառ տպավորություն էր թողնում, որ ցանկություն էր առաջացնում իրեն ընդօրինակելու:

Սակայն տնօրեններից մեկը՝ Աշոտ Հարոյանը, հպարտանում էր իր գրավիչ արտաքինով, ուստի և իր համար անհրաժեշտ չհամարեց սննդակարգ պահպանելը կամ նոր հագուստ գնելը: Բայց Արթուր Օգանեզովի խոսքերը նրա սրտում նույնպես ջերմ արձագանք գտան, և նա մտահղացավ, թե ինչ կերպ բարձրացնի հերթական

սիրուհու պաշտոնը՝ շրջանցելով Շուշանին և տեղիք չտալով ավելորդ խոսակցությունների:

- Անձնակազմի կառավարիչը պետք է նաև նոր խնդիրներ դնի իր առաջ: Ես կցանկանայի, որ խթանվի ղեկավար պաշտոններին կանանց առաջընթացը: Տվյալ պահին դրությունը պարզապես անմխիթար է, - հայտարարեց Արթուր Օգանեզովը, և Աշոտը գոհունակությամբ ժպտաց...

...Հարկում մեռյալ լռություն էր: Շուշանը գնաց դեպի հանդերձարանը, որտեղ կախված էր բաճկոնը, և հանկարծ լսեց Աշոտ Հարոյանի ձայնը, որ գալիս էր նրա աշխատասենյակից:

- Արթուր Օգանեզովը պարզ կերպով հասկացրեց, որ սիրում է աշխատել գեղեցիկ, նրբաճաշակ կանանց շրջապատում: Նա լոկ մայեց մեր անշուք Շուշոյի լուսանկարին, և մենք հասկացանք, որ Շուշանը ղեկավար պաշտոն չի ստանա: Այդ պատճառով էր, որ աջակցեցի Նելիին: Համաձայն եմ, նա ցածր որակավորում ունի, սակայն շատ ավելի վայելչատես է...

Շուշանը տեղում քարացավ: *Անշուք Շուշո. իմ մասի՞ն է:*

- Շուշան Երանյանը հիանալի աշխատող է, - առարկեց տղամարդու ձայնը, որ պատկանում էր ընկերության կառավարիչներից մեկին:

- Չեմ վիճում, նա արժեքավոր աշխատող է, բայց... Նույնիսկ լավագույն ընկերուհին նրան գեղեցկուհի չի անվանի: Թաց վերմակի պես նա կարող է փչացնել ողջ հաճույքը, - ասաց Հարոյանը այնպիսի չարությամբ, որ Շուշանի մարմնով սարսուռ անցավ: - Մեզ կվնասենք, եթե անտեսենք պարոն Օգանեզովի ճաշակը և ընկերությունում նրա հայտնվելու հենց առաջին օրը իրեն ներկայացնենք Շուշոյին:

Շուշանը ողջ մարմնով ցնցվեց: Վախենալով, որ իրեն կարող են տեսնել ականջ դնելիս, շրջվեց և կամացուկ հետ գնաց դեպի վերելակ՝ այդպես էլ չվերցնելով բաճկոնը: Այժմ գիտեր, թե որն էր իր փոխարեն Նելիին բաժնի կառավարիչ նշանակելու պատճառը:

Անշուք Շուշո՞:

Վիրավորանքից ներսը ամեն ինչ տակնուվրա եղավ: Աշոտ Հարոյանը ամեն բան հստակորեն իր տեղը դրեց. ի տարբերություն նրա՝ *անշուք Շուշոյի*, Նելին հրապուրիչ էր և հաջողություն ուներ տղամարդկանց շրջանում: Նրան այդ պաշտոնին նշանակելու որոշիչ գործոնը ոչ թե իր գիտելիքներն էին, այլ գայթակղիչ բարեմասնությունները:

Եվ այնուհանդերձ նվաստացումը դառն էր: Աչքերը լցվեցին այրող արտասուքով, բայց նա դրանց չթողեց դուրս թափվել: Դա չափազանց անարդարացի էր: Ոչ ոք իր պես չէր համապատասխանում այդ աշխատանքին, և ինքը համառորեն տքնում էր՝ այդ պաշտոնը ստանալու համար: Չէ որ կարևորը մարդու արտաքինը չէ:

Անշուք Շուշո՞: Նա քննադատվեց: Աշոտը երբեք մնան բան չէր ասի, եթե իմանար, որ երբ նա տասնյոթ տարեկան էր, սնդուսափայլ հանդեսներից մեկը նրան հրավիրեց լուսանկարվելու՝ դիմահարդարման միջոցներ գովազդելու համար, և ձեռնտու պայմանագիր առաջարկեց: Հայրը իհարկե կատաղեց, երբ իմացավ, որ աղջիկը զբաղվելու է այդպիսի, իր կարծիքով, անվայելուչ աշխատանքով: Բայց հետագա ութ տարվա ընթացքում Շուշանը հիշողության մեջ խնամքով պահում էր այն օրը, երբ ինքը առաջին ու վերջին անգամ ընթոստացավ Գևորգ Երանյանի խիստ կանոնների դեմ: Նա թաքուն գնաց պայմանավորված վայրը, որտեղ կարգի բերեցին իր դեմքն ու մազերը: Շուշանը հիացած նայում էր, թե ինչպես են ճարտար շպարն ու հագուստը իրեն վերածում նիհար ու տափակակուրծք աղջկանից վառ երկարոտն գեղեցկուհու: Գուցե և ի վերջո հայտնվեր հանդեսի շապկին, բայց լուսանկարիչը սկսեց աներեսաբար նրան կաչել, և Շուշանը փախավ: Այդ միջադեպը համոզեց նրան, որ հայրը իրավացի էր՝ խոսելով այդ ոլորտում տիրող բարքերի մասին:

Իսկ եթե փորձի փոխե՞լ իր արտաքինը, չէ որ դա հաջողվել էր գործակալության հրաշագործներին: Այո, դա լավ գաղափար է: Ինքը շուքով կհայտնվի ընդունելությանը և այդպիսով Աշոտ Հարոյան

նի և այդ կնամուլ Արթուր Օգանեզովի պորտը տեղը կդնի: Ո՞նց կարելի է այնքան ապուշ լինել, որ գործարարության ոլորտում գերադասել գեղեցկությունը ուղեղից:

Շուշանը հանեց բջջախոսը և զանգեց ընկերուհուն՝ Ալդային, որը սեփական գեղեցկության սրահ ուներ: Երբ հարցրեց, թե նա կարող է արդյոք արագ կարգի բերել իր մագերես ու դեմքը, Ալդան այնքան ցնցված էր, որ մի պահ պապանձվեց:

- Մի՞թե վերջապես խելքի ես եկել, - հարցրեց՝ վերագտնելով խոսելու ունակությունը: - Թե՞ ինչ-որ ուրիշ բան կա:

- Ուրիշ բան, - մթնոռթագ Շուշանը: - Այսօր երեկոյան գնում եմ ինձ համար շատ կարևոր մի միջոցառման...

2

Արթուր Օգանեզովը ոչ միայն ծանծրանում էր, այլև վատ տրամադրություն ուներ: Նա չէր խնդրել կազմակերպել այդ ընդունելությունը, որ իրեն բուլորովին պետք չէր: Անակրեցկալներ չէր սիրում և համարում էր, որ նման միջոցառումները ոչ մի դեր չեն խաղում գործարարության աշխարհում: Երկարաշունչ ճառերը նույնպես երբեք հաճույք չէին պատճառում: Էլ ավելի քիչ էին դուր գալիս շողոքորթությունը և աշխատողների գրգռված տրամադրությունը: Հատկապես այն պատճառով, որ նրանց զգալի մասը բավական մեծ բաժին ոգեւից էր ընդունել նախքան երեկույթի սկիզբը:

Կարևոր զանգի պատրվակով լքելով սրահը՝ Արթուրը, բջջախոսը ականջին, գնում էր հյուրանոցի լայն միջանցքով, երբ տեսավ թխահեր կնոջը: Նա այնքան հրապուրիչ էր, որ Արթուրը ականա կանգ առավ:

Շագանակագույն խիտ մագերես ծանր ալիքով իջնում էին մերկ ուսերին և երիզում ձվաձև դեմքը: Ուռուցիկ շուրթերը դեմքին փոքր-ինչ քմահաճ արտահայտություն էին հաղորդում: Բայց ամենաուշագրավը նշանն էր կանաչավուն աչքերն էին, որոնք կարծես մեղմ լույս էին ճառագում: Ամեն դեպքում Արթուրը նրան ուշադրություն

կդարձներ, քանի որ կինը բարձրահասակ էր: *Չարյուր ութսուն սանտիմետրից ոչ պակաս, որոշեց նա աչքաչափով, ընդ որում չի խուսափում բարձր կրունկ կրելուց:* Բնությունը նրան նույնպես բարձր հասակ էր շնորհել, այնպես որ թխահեր գեղեցկուհին նրա կողքին լավ կդիտվեր:

Նա ծանոթ հուզմունք զգաց, ինչը սովորաբար լինում էր, երբ հաճելի ծանոթություն հաստատելու հեռանկար էր բացվում: Բայց բուրբ այդ ծանոթությունները, որպես կանոն, նպատակաուղղված էին անկողնուն:

Մի խոսքով՝ Արթուրը համոզված էր, որ տեսնում է իր հերթական սիրուհուն: